Luys Lույս®

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՆԴԵՔՍՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հաշվետվություն Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի կողմից հրապարակված Մարդկային ներուժի զարգացման զեկույցի (2019թ.) հիման վրա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 1
2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2
3. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 3
4. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՐՀՈՒՄ 5
5. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՅԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 9
6. ԱՄՓՈՓՈՒՄ 13
7. ՀԱՎԵԼՎԱԾ 14

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

ԽՍՀՄ – Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն

ԱՄՆ – Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ՀԱԵ – համախառն ազգային եկամուտ

ՄԱԿԶԾ – Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր

ՄՆԶԶ – մարդկային ներուժի զարգացման զեկույց

ՄՆԶԻ – մարդկային ներուժի զարգացման ինդեքս

ԱՄՆԶԻ – մարդկային ներուժի զարգացման ինդեքս՝ անհավասարության հաշվառմամբ

ԳԶԻ – գենդերային զարգացման ինդեքս

ԳԱԻ – գենդերային անհավասարության ինդեքս

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սկսած 1990 թվականից՝ Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիրը (ՄԱԿԶԾ)[1] հրապարակում է ամենամյա զեկույց՝ նվիրված տարբեր երկրներում մարդկային ներուժի զարգացման գնահատմանը: Շուրջ երեք տասնամյակ շարունակ այս հրապարակումները թույլ են տվել բացահայտել մարդկային ներուժի բևեռացման պատճառները՝ նպաստելով առավել հասցեական սոցիալական և տնտեսական քաղաքականության մշակմանը: Սույն աշխատանքի նպատակն է համակարգել և ամփոփել 2019-ի Մարդկային ներուժի զարգացման զեկույցի (ՄՆԶԶ)[2] այն հիմնական դրույթները, որոնք վերաբերում են ՀՀ-ին:

Այսօր տնտեսական և սոցիալական իրավիճակը աշխարհում բավականին մտահոգիչ է և անորոշություններով լի: Այսպես, Եվրագոտու հարավային երկրները, կորցնելով մրցունակությունը և կուտակելով ընթացիկ հաշվի դեֆիցիտներ, հայտնվել են պերմանենտ պարտքային ճգնաժամում, որը ուղեկցվում է գործազրկության աննախադեպ աճով: ԱՄՆ-ում խորանում է եկամուտների բևեռացումը՝ տարբեր սոցիալական խմբերի միջև ստեղծելով անհավասար մեկնարկային պայմաններ: Ռուսաստանի տնտեսությունը կենաց-մահու պայքար է մղում տնտեսական պատժամիջոցների դեմ, բայց, այնուամենայնիվ, անզոր է «ռեսուրսային անեծքը» հաղթահարելու հարցում: Հայաստանը նոր քաղաքական իշխանության պայմաններում զբաղված է զարգացման օպտիմալ մոդելի փնտրտուքով, որի իրագործումը, ամենայն հավանականությամբ, դեռ մեծ ջանքեր և ռեսուրսներ է պահանջելու: Այս շարքը կարելի է երկար շարունակել: Մի բան ակնհայտ է. հաճախ վերոհիշյալ գործընթացներում անհատների ճակատագրերը ստորադասվում են խմբային շահերին, քայքայվում են մարդկային ներուժի հիմքերը, և վտանգվում է սերունդների բարեկեցությունը: Այս առումով, ինչպես Հայաստանի, այնպես էլ այլ երկրների համար չափազանց արդիական է մարդկային ներուժի ուժեղ և թույլ կողմերի բացահայտումը միջազգային համեմատությունների համատեքստում: Հիմնվելով ՄՆԶԶ-2019 զեկույցում ներառված 189 երկրների տվյալների վրա՝ սույն վերլուծությունը ուղղված է այս խնդրի բացահայտմանը ՀՀ տնտեսության և մարդկային ներուժի հատույթում:

Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ 2018թ. ՀՀ մարդկային ներուժի զարգացման ինդեքսը (ՄՆԶԻ) 2017-ի համեմատ աճել է 0.002 միավորով և կազմել 0.760: Այս ցուցանիշով Հայաստանը տարածաշրջանում գրավում է 4-րդ տեղը՝ առաջ

[1] https://www.undp.org/:
[2] http://hdr.undp.org/sites/default/files/hdr2019.pdf:

անցնելով միայն Ադրբեջանից: Միաժամանակ, ՄՆԶԻ-ով Հայաստանը 0.074 միավորով գերազանցում է զարգացող երկրների միջինին և 0.029 միավորով՝ աշխարհի միջինին: Ինչ վերաբերում է մյուս ինդեքսներին, ապա մարդկային ներուժի զարգացման ինդեքսը՝ անհավասարության հաշվառմամբ (ԱՄՆԶԻ), ՀՀ-ում 2018թ. համար գնահատվում է շուրջ 0.685 և հանդիսանում է երրորդ ցուցանիշը տարածաշրջանում, իսկ գենդերային զարգացման ինդեքսը (ԳԶԻ) կազմում է 0.972, ինչը տարածաշրջանի երկրորդ ցուցանիշն է: Հատկանշական է, որ և՛ ԱՄՆԶԻ-ով, և՛ ԳԶԻ-ով ՀՀ-ն բարձր է ինչպես զարգացող երկրների, այնպես էլ աշխարհի միջինից:

3. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը (ՄՆԶԻ) հաշվարկվում է որպես *առողջության*, *կրթության* և *կենսամակարդակի* ենթաինդեքսների միջին երկրաչափական[3] (տե՛ս գծապատկեր 1): Իրենց հերթին՝ առողջության և կենսամակարդակի ենթաինդեքսները որոշվում են համապատասխանաբար *կյանքի սպասվող տևողության* և շնչային *համախառն ազգային եկամտի (ՀԱԵ)* (լոգարիթմական) ստանդարտացման[4] արդյունքում: Ըստ որում, ՄՆԶԶ-ում կյանքի սպասվող տևողությունը սահմանվում է հետևյալ կերպ. այն տարիների քանակը, որը նորածինը կապրի մահացության գործակիցների նախնական արժեքների պահպանման պարագայում: Իսկ շնչային ՀԱԵ-ն ՀԱԵ-ի, այն է՝ տարվա ընթացքում երկրի ռեզիդենտների կողմից ստեղծված ընդհանուր գործոնային եկամտի հարաբերությունն է բնակչության միջին թվաքանակին: Ըստ որում, այն փոխարկվում է միջազգային դոլարի՝ ըստ գնողունակության համարժեքության դրույքաչափերի՝ հաշվարկված 2011թ. հաստատուն գների հիման վրա, այսինքն՝ ըստ 2011 PPP սկզբունքի: Փոխարկման նպատակն է հավասարեցնել տարբեր արժույթների գնողունակությունները՝ երկրների գների մակարդակները դարձնելով համադրելի:

Ինչ վերաբերում է կրթության ենթաինդեքսին, ապա զեկույցում այն հաշվարկվում է որպես երկու ցուցիչների՝ կրթության սպասվող և միջին տևողությունների ստանդարտացված արժեքների միջին թվաբանական: Կրթության սպասվող տևողությունը նույնականացնում է կրթական տարիների այն քանակը, որը

---

[3] Ա, Բ և Գ մեծությունների միջին երկրաչափականը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ $\sqrt[3]{Ա \cdot Բ \cdot Գ}$:

[4] Ցուցանիշի ստանդարտացում ասելով՝ նկատի ունենք հետևյալ հանրահաշվական ձևափոխությունը՝ $\frac{\text{փաստացի արժեք} - \text{նվազագույն արժեք}}{\text{առավելագույն արժեք} - \text{նվազագույն արժեք}}$: Այն հնարավորություն է տալիս ազատվել տվյալ ցուցանիշի չափողականությունից՝ ստանալով $[0,1]$ միջակայքին պատկանող ինդեքս: Ստանդարտացումը հեշտացնում է տարասեռ ցուցանիշների համադրումը, օրինակ՝ ներառումը ավելի ընդհանրական ինդեքսում:

դպրոց ընդունվող երեխան կարող է ակնկալել ուսումնական հաստատությունների ընդունելության գործակիցների նախնական արժեքների պահպանման պարագայում: Կրթության միջին տևողությունը ներկայացնում է կրթական տարիների միջին քանակը 25 և ավելի տարեկան բնակչության շրջանում:

Գծապատկեր 1. ՄՆԶԻ-ի հաշվարկի գրաֆիկական պատկերը



Հաշվի առնելով վերոհիշյալ ենթաինդեքսների բաշխման քվարտիլները[5], ինչպես նաև ՄՆԶԻ-ի հաշվարկման բանաձևը (բաղադրիչների միջին երկրաչափականի միջոցով)՝ զեկույցում գնահատվում են ՄՆԶԻ-ի կրիտիկական շեմերը, որոնք թույլ են տալիս դասակարգել երկրները: ՄՆԶԶ-2019-ի դասակարգիչը այսպիսին է. տվյալ երկրում մարդկային ներուժի զարգացումը համարվում է *շատ բարձր* (*բարձր*, *միջին*, *ցածր*), եթե ՄՆԶԻ-ն պատկանում է $[0.800, 1.000]$ ($[0.700, 0.799]$, $[0.550, 0.699]$, $[0.000, 0.549]$) միջակայքին:

Համառոտ ներկայացնենք նաև մյուս ինդեքսների կառուցման մեթոդաբանությունը: Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը՝ անհավասարության հաշվառմամբ (ԱՄՆԶԻ) կառուցվում է եռաքայլ ալգորիթմի միջոցով: Առաջին քայլում, ելնելով Ատկինսոնի բանաձևից[6], գնահատվում է մարդկային զարգացման յուրաքանչյուր հատույթի՝ առողջության, կրթության և կենսամակարդակի անհավասարության աստիճանը: Երկրորդ քայլում կարգաբերվում է ենթաինդեքսներից յուրաքանչյուրը՝ հաշվի առնելով Ատկինսոնի համապատասխան գործակիցը[7]: Վերջապես երրորդ քայլում հաշվարկվում է կարգաբերված ենթաինդեքսների միջին երկրաչափականը՝ որպես ԱՄՆԶԻ:

---

[5] Քվարտիլներ են կոչվում այն երեք թվերը, որոնք ցուցանիշի բաշխումը տրոհում են այնպիսի չորս մասերի, որոնցում ընդգրկված են միևնույն թվով տարրեր:

[6] Ատկինսոնի բանաձևը հետևյալն է՝ $1 - \frac{\textit{միջին երկրաչափական}}{\textit{միջին թվաբանական}}$: Այն ներմուծվել է անգլիացի տնտեսագետ Ատկինսոնի կողմից՝ 1970թ.:

[7] Կարգաբերված ենթաինդեքսը հաշվարկվում է $(1 - \text{Ա}) \cdot \text{ԵԻ}$ բանաձևով, որտեղ ԵԻ-ն սկզբնական ենթաինդեքսն է, իսկ Ա-ն՝ Ատկինսոնի համապատասխան գործակիցը:

Գենդերային զարգացման ինդեքսը (ԳԶԻ) հաշվարկվում է հետևյալ տրամաբանությամբ. նախ ՄՆԶԻ-ն գնահատվում է կանանց և տղամարդկանց դասերի համար առանձին-առանձին, այնուհետև հաշվարկվում է այս մեծությունների հարաբերությունը: Ինչ վերաբերում է գենդերային անհավասարության ինդեքսին (ԳԱԻ), ապա դրա հաշվարկին բնորոշ են որոշակի տեխնիկական նրբություններ, որոնց կարելի է ծանոթանալ ՄՆԶԶ-ի տեխնիկական հավելվածներում[8]: Բավական է նշել, որ ԳԶԻ-ն և ԳԱԻ-ն ունեն միևնույն տնտեսագիտական իմաստը այն վերապահումով, որ ԳԱԻ-ի փոքր արժեքները առավել նախընտրելի են:

Հարկ է ընդգծել, որ 2019թ. զեկույցի շրջանակներում մեթոդաբանական շտկումների արդյունքում ճշգրտվել են նախորդ տարիների ցուցանիշները: Ուստի, նախկին զեկույցների, ինչպես նաև այդ զեկույցների հիման վրա կատարված վերլուծությունների (այդ թվում՝ «Լույս» հիմնադրամի նախորդ տարվա վերլուծությունը[9]) համեմատ թվային անհամապատասխանությունների հանդիպելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սույն վերլուծությունը հիմնված է թարմացված տվյալների վրա:

4. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՐՀՈՒՄ

2018թ. ՄՆԶԻ-ն ՀՀ համար կազմել է 0.760: Այս ցուցանիշով 189 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է 81-րդ հորիզոնականը և համարվում է մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակ ունեցող երկիր:

Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, վերջին երեք տասնամյակների ընթացքում մարդկային ներուժի բնագավառում ՀՀ դիրքերը բավական բարելավվել են: Այսպես, եթե 1990թ. ՄՆԶԻ-ն կազմում էր 0.633, ապա 2017-ին այն հասնում է 0.760-ի՝ ավելանալով 0.127 միավորով: Ընդհանրապես, 1990-2018թթ. ՄՆԶԻ-ի միջին տարեկան հավելաճի տեմպը կազմել է շուրջ 0.65%: Ուշագրավ է նաև, որ 2018թ. 2017-ի համեմատ ՄՆԶԻ-ն աճել է 0.002 միավորով, իսկ դիրքը սանդղակում մնացել է անփոփոխ՝ 81-րդ (ՄՆԶԻ-ի հորիզոնականների համար տե՛ս հավելվածը):

---

[8] http://hdr.undp.org/sites/default/files/hdr2019_technical_notes.pdf:

[9] Միջազգային կառույցների կողմից հրապարակված ցուցանիշների ուսումնասիրություն, «ՀՀ Մարդկային ներուժի զարգացման ինդեքսները և ցուցանիշները», https://www.luys.am/index.php?m=yearRep&lang=arm&p=186

Գծապատկեր 2. ՄՆԶԻ-ի դինամիկան ՀՀ-ում



2018թ. 1990-ի համեմատ բարելավում է արձանագրվել ՄՆԶԻ-ի բոլոր բաղադրիչներում՝ և՛ առողջապահությունում, և՛ կրթությունում, և՛ կենսամակարդակում: Ըստ որում, առողջության ցուցիչը՝ կյանքի սպասվող տևողությունը, ավելացել է 10.3%-ով, կրթության ցուցիչները՝ կրթության սպասվող և միջին տևողությունները՝ համապատասխանաբար 22.2%-ով և 16.8%-ով, իսկ կենսամակարդակի ցուցիչը՝ շնչային ՀԱԵ-ն՝ 157.7%-ով: Նկատենք նաև, որ մարդկային ներուժի ենթաինդեքսների առումով 2018-ը չի զիջում նաև 2017-ին, ավելին՝ կյանքի սպասվող տևողության և շնչային եկամուտների գծով առկա է որոշակի աճ:

Աղյուսակ 1. ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները ՀՀ-ում 1990-2018թթ.

	Կյանքի սպասվող տևողություն, տարի	Կրթության սպասվող տևողություն, տարի	Կրթության միջին տևողություն, տարի	ՀԱԵ, շնչային, ԱՄՆ դոլար	ՄՆԶԻ
1990	67.9	10.8	10.1	3600	0.633
1995	68.9	10.2	10.4	2167	0.604
2000	71.4	11.2	10.8	3006	0.649
2005	72.6	11.4	10.9	5600	0.694
2010	73.3	13.1	11.1	7061	0.729
2015	74.5	13.0	11.6	8482	0.748
2016	74.6	13.2	11.7	8310	0.751
2017	74.8	13.2	11.8	9064	0.758
2018	74.9	13.2	11.8	9277	0.760

Աղյուսակ 2-ը ցույց է տալիս, որ Հայաստանը ՄՆԶԻ-ով տարածաշրջանում գրավում է 4-րդ տեղը (0.760 միավոր, 81-րդ հորիզոնական)՝ առաջ անցնելով միայն

Ադրբեջանից: Տարածաշրջանի առաջատարը Թուրքիան է, որը 0.807 միավորով զբաղեցնում է 59-րդ հորիզոնականը: Երկրորդ տեղում Իրանն է (0.797 միավոր, 65-րդ հորիզոնական), իսկ երրորդում՝ Վրաստանը՝ (0.786 միավոր, 70-րդ հորիզոնական): Մարդկային ներուժի ասպարեզում տարածաշրջանի ետնապահը Ադրբեջանն է՝ 0.754 միավոր և 87-րդ հորիզոնական:

Աղյուսակ 2. ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները ՀՀ-ում և տարածաշրջանի մյուս երկրներում 2018թ.

	Կյանքի սպասվող տևողություն, տարի	Կրթության սպասվող տևողություն, տարի	Կրթության միջին տևողություն, տարի	ՀԱԵ, շնչային, ԱՄՆ դոլար	ՄՆԶԻ
Հայաստան	74.9	13.2	11.8	9277	0.760
Իրան	76.5	14.7	10	18166	0.797
Թուրքիա	77.4	16.4	7.7	24905	0.807
Վրաստան	73.6	15.4	12.8	9570	0.786
Ադրբեջան	72.9	12.4	10.5	15240	0.754

Աղյուսակ 2-ի տվյալները նաև հուշում են, որ Հայաստանը տարածաշրջանում ունի համեմատական առավելություն կրթության ոլորտում. կրթական տարիների միջին քանակով այն զիջում է միայն Վրաստանին: Մյուս կողմից՝ Հայաստանի համար ուժերի դասավորվածությունը անբարենպաստ է հատկապես միջին կենսամակարդակի հարցում. 9277 դոլար միջին շնչային եկամտով Հայաստանը զիջում է իր բոլոր հարևաններին:

Անհրաժեշտ է արձանագրել, որ մարդկային ներուժի բնագավառում Հայաստանի կարգավիճակը, ընդհանուր առմամբ, բավականին բարենպաստ է: Աղյուսակ 3-ը վկայում է, որ ՄՆԶԻ-ով Հայաստանը 0.074 միավորով գերազանցում է զարգացող երկրների միջինին և 0.029 միավորով՝ աշխարհի միջինին: Ըստ որում, գերակայությունը արտահայտվում է մարդկային ներուժի բոլոր բաղադրիչներում, բացառությամբ շնչային եկամուտների: Այսպես, Հայաստանում կյանքի սպասվող տևողությունը զարգացող երկրների միջինից 3.8 տարով ավելի է, աշխարհի միջինից՝ 2.3 տարով: Բավական բարձր է նաև կրթական ծառայությունների հասանելիությունը (պետք է խոստովանել նաև, որ միշտ չէ, որ կրթության որակը պահպանվել է բարձր մակարդակում): Իսկապես, Հայաստանում կրթական տարիների միջին քանակը զարգացող երկրների միջինին գերազանցում է 4.4 տարով, իսկ աշխարհի միջինին՝ 3.4 տարով: Ինչ վերաբերում է շնչային ՀԱԵ-ին, ապա այս ցուցանիշով Հայաստանը

հետ է զարգացող երկրների միջինից շուրջ 11%-ով, իսկ աշխարհի միջինից՝ շուրջ 41%-ով:

Աղյուսակ 3. ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները ՀՀ-ում, մի շարք տարածաշրջաններում և երկրների խմբերում 2018թ.

	Կյանքի սպասվող տևողություն, տարի	Կրթության սպասվող տևողություն, տարի	Կրթության միջին տևողություն, տարի	ՀԱԵ, շնչային, ԱՄՆ դոլար	ՄՆԶԻ
Հայաստան	74.9	13.2	11.8	9277	0.76
Եվրոպա և Կենտրոնական Ասիա	74.2	14.6	10.2	15498	0.779
Արևելյան Ասիա և Խաղաղօվկիանոսյան երկրներ	75.3	13.4	7.9	14611	0.741
Հարավային Ասիա	69.7	11.8	6.5	6794	0.642
Լատինական Ամերիկա և Կարիբյան երկրներ	75.4	14.5	8.6	13857	0.759
Ենթասահարական Աֆրիկա	61.2	10	5.7	3443	0.541
Արաբական երկրներ	71.9	12	7.1	15721	0.703
Քիչ զարգացած երկրներ	65	9.8	4.8	2630	0.528
Զարգացող երկրներ	71.1	12.2	7.4	10476	0.686
Զարգացած երկրներ (OECD)	80.4	16.3	12	40615	0.895
Աշխարհ	72.6	12.7	8.4	15745	0.731

Նշենք նաև, որ աշխարհում մարդկային ներուժի զարգացման ամենաբարձր մակարդակը Նորվեգիայում է: Առաջին հնգյակում են նաև Շվեյցարիան, Իռլանդիան, Գերմանիան և Հոնկոնգը: Ինչ վերաբերում է «հետնապահներին», ապա դրանց շարքը գլխավորում է Նիգերը: Վատագույն հնգյակի մնացած երկրները նույնպես աֆրիկյան մայրցամաքից են՝ Կենտրոնաաֆրիկյան Հանրապետություն, Չադ, Հարավային Սուդան և Բուրունդի:

Այժմ հակիրճ անդրադառնանք մարդկային ներուժի ենթաինդեքսների միջազգային դրսևորումներին: Ամենաառողջ մարդկային ներուժը Հոնկոնգում է և Ճապոնիայում, որտեղ կյանքի սպասվող տևողությունը կազմում է համապատասխանաբար 84.7 և 84.5 տարի: Մյուս կողմից՝ բավական կարճ կյանքով է ապրում աֆրիկյան մայրցամաքի բնակչությունը. «առաջատարը» Կենտրոնաաֆրիկյան Հանրապետությունն է, որտեղ կյանքի սպասվող տևողությունը ընդամենը 52.8 տարի է:

Կրթական տարիների միջին քանակը ամենաշատն է Գերմանիայում՝ 14.1 տարի: Երկրորդ տեղը կիսում են Շվեյցարիան և Միացյալ Նահանգները՝ 13.4 տարի: Ուշագրավ է, որ այս ցուցանիշով Հայաստանը ներառվում է աշխարհի լավագույն 40 երկրների շարքում: Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ ժամանակակից աշխարհում կան նաև երկրներ, որոնցում կրթության միջին տևողությունը ընդամենը 1-3 տարի է՝ Բուրկինա Ֆասո, Նիգեր, Մալի, Չադ, Գվինեա և այլն: Հասկանալի է, որ

այս երկրների տնտեսական և սոցիալական լճացման պատճառները պետք է փնտրել նաև մարդկային ներուժի կրթության բաղադրիչի չափազանց ցածր մակարդակում:

Ինչ վերաբերում է ամենաբարձր կենսամակարդակին, ապա այն դիտվում է Կատարում. այստեղ շնչային ՀԱԵ-ն, պայմանավորված բնական ռեսուրսների գործոնով, 2018-ի դրությամբ գերազանցել է 110,000 դոլարը: Ինչպես և կարելի էր ակնկալել, աֆրիկյան պետությունները դրսևորում են բավական ցածր կատարողական նաև այս ուղղությամբ: Ըստ որում, ամենաաղքատ երկիրը Բուրունդին է՝ 660 դոլար շնչային եկամտով:

5. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՅԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՄՆԶԻ-ն զերծ չէ սահմանափակումներից: Մասնավորապես, այն հաշվի չի առնում սոցիալական անհավասարությունը, ինչպես նաև մարդկային ներուժի նվաճումների «գենդերային բաղադրությունը»: Առաջին բացը լրացնելու համար ՄԱԿԶԾ-ի փորձագետները ներմուծել են *մարդկային ներուժի զարգացման ինդեքս՝ անհավասարության հաշվառմամբ* (ԱՄՆԶԻ) հասկացությունը, իսկ երկրորդի համար՝ *գենդերային զարգացման ինդեքս* (ԳԶԻ) և *գենդերային անհավասարության ինդեքս* (ԳԱԻ) հասկացությունները:

ԱՄՆԶԻ-ն միտված է ճշգրտելու ՄՆԶԻ-ն՝ հաշվի առնելով անհավասարությունը մարդկային ներուժի 3 բաղադրիչներում՝ կրթության, առողջապահության և կենսամակարդակի տիրույթներում: ԱՄՆԶԻ-ն հավասար է ՄՆԶԻ-ին, եթե չկա որևէ տեսակի անհավասարություն, և փոքր է նրանից՝ հակառակ պարագայում:

Աղյուսակ 4. ՄՆԶԻ-ն և ԱՄՆԶԻ-ն 2018թ.

	ՄՆԶԻ	ԱՄՆԶԻ	Կորուստը, տոկոս
Հայաստան	0.760	0.685	9.9
Իրան	0.797	0.706	11.5
Թուրքիա	0.807	0.675	16.2
Վրաստան	0.786	0.692	12.0
Ադրբեջան	0.754	0.683	9.4
Բարձր ՄՆԶԻ-ով երկրներ	0.75	0.615	17.9
Զարգացող երկրներ	0.686	0.533	22.3
Աշխարհ	0.731	0.584	20.2

Ինչպես արդեն նշվեց, 2018թ. Հայաստանում ՄՆԶԻ-ն կազմել է 0.760: Միաժամանակ, ԱՄՆԶԻ-ն գնահատվում է 0.685, այսինքն՝ շուրջ 9.9%-ով պակաս: Աղյուսակ 4-ը ցույց է տալիս, որ ինդեքսի ավելի նշանակալի կորուստներ են արձանագրվել հարևան Թուրքիայում, Վրաստանում և Իրանում: Պատճառն այն է, որ Հայաստանում եկամուտների անհավասարությունը որոշ չափով հավասարակշռվում է առողջապահական և կրթական ծառայությունների հասանելիությամբ: Արդյունքում Թուրքիան, որը ՄՆԶԻ-ով տարածաշրջանում զբաղեցնում է առաջին հորիզոնականը, միաժամանակ վերջինն է՝ ըստ ԱՄՆԶԻ: Դրական է նաև այն, որ ինչպես ՄՆԶԻ-ի, այնպես էլ ԱՄՆԶԻ-ի գծով Հայաստանը գերազանցում է թե՛ զարգացող երկրների, թե՛ աշխարհի միջինին: Բացի այդ, Հայաստանում մարդկային ներուժի վրա սոցիալական անհավասարության բացասական էֆեկտը 8 տոկոսային կետով ցածր է իր խմբի, այն է՝ բարձր ՄՆԶԻ ունեցող երկրների դասի միջինի համեմատ:

Ինչ վերաբերում է ԳԶԻ-ին, ապա որքան այն մոտ է 1-ին, այնքան մեծ է մարդկային ներուժի գենդերային հավասարությունը: Հաշվի առնելով այս նկատառումը՝ երկրների, ըստ գենդերային զարգացման, դասակարգման հիմքում դրվել է ԳԶԻ-ի բացարձակ շեղումը 1-ից, այսինքն՝ $100 \cdot |\text{ԳԶԻ} - 1|$ մեծությունը: Ըստ որում, մարդկային ներուժի ձեռքբերումներում կանանց և տղամարդկանց հավասարությունը համարվում է բարձր (միջինից բարձր, միջին, միջինից ցածր, ցածր), եթե գենդերային հավասարությունից բացարձակ շեղումը ընկած է $[0\%, 2.5\%]$ $((2.5\%, 5\%]$, $(5\%, 7.5\%]$, $(7.5\%, 10\%]$, $(10\%, \infty))$ միջակայքում:

Աղյուսակ 5. ՄՆԶԻ-ն և ԳԶԻ-ն 2018թ.

	ՄՆԶԻ		ԳԶԻ	
	իգական	**արական**	**արժեք**	**խումբ**
Հայաստան	0.746	0.767	0.972	միջինից բարձր
Իրան	0.727	0.832	0.874	ցածր
Թուրքիա	0.771	0.834	0.924	միջինից ցածր
Վրաստան	0.775	0.791	0.979	բարձր
Ադրբեջան	0.728	0.774	0.940	միջին
Բարձր ՄՆԶԻ-ով երկրներ	0.732	0.763	0.96	-
Զարգացող երկրներ	0.653	0.711	0.918	-
Աշխարհ	0.707	0.751	0.941	-

Համաձայն աղյուսակ 5-ի՝ Հայաստանը ԳԶԻ-ով գտնվում է բավական բարվոք դիրքերում: Այն տարածաշրջանում գրավում է երկրորդ տեղը՝ զիջելով միայն Վրաստանին: Սա նշանակում է, որ ՀՀ-ում մարդկային ներուժի՝ կրթության, առողջության և կենսամակարդակի զարգացման գործընթացում կանանց և

տղամարդկանց մասնակցության աստիճանները, ընդհանուր առմամբ, համաչափ են և համադրելի:

ԳԶԻ-ի քույր ցուցանիշը *գենդերային անհավասարության ինդեքսն* է (ԳԱԻ): Հետաքրքրական է, որ բազում իրավիճակներում ԳԱԻ-ի կառուցման ընթացքում օգտագործվող ցուցանիշները առավել խոսուն են, քան ինքը՝ ինդեքսը: ԳԱԻ-ի հենասյուները հինգն են՝ *մայրական մահացության գործակից, դեռահասների ծնելիության մակարդակ, խորհրդարանում կանանց մասնաբաժին, առնվազն որոշակի միջնակարգ կրթություն ունեցող բնակչության մասնաբաժին, աշխատուժի մասնակցության մակարդակ:*

Աղյուսակ 6. ԳԱԻ-ն և դրա բաղադրիչները 2018թ.

	ԳԱԻ		Մայրական մահացության գործակից	Դեռահասների ծնելիության մակարդակ	Կանանց մասնաբաժինը խորհրդարանում (%)	Առնվազն որոշակի միջնակարգ կրթությամբ բնակչության մասնաբաժինը (%)		Աշխատուժի մասնակցության մակարդակ (%)	
	արժեք	հորիզոնական				իգական	արական	իգական	արական
Հայաստան	0.259	57	25	21.5	18.1	96.9	97.6	49.6	69.9
Իրան	0.49	118	25	40.6	5.9	67.4	72.0	16.8	71.2
Թուրքիա	0.31	66	16	26.6	17.4	44.3	66.0	33.5	72.6
Վրաստան	0.35	75	36	46.4	16.0	97.4	98.6	57.8	78.7
Ադրբեջան	0.32	70	25	55.8	16.8	93.9	97.5	63.1	69.7
Բարձր ՄՆԶԻ-ով երկրներ	0.33	-	56	33.6	24.4	68.9	74.5	53.9	75.6
Զարգացող երկրներ	0.47	-	231	46.8	22.4	55.0	65.8	46.6	76.6
Աշխարհ	0.44	-	216	42.9	24.1	62.8	71.2	48.0	74.9

Առաջին, ՀՀ-ում մայրական մահացության գործակիցը ընդունում է 25 արժեքը: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր 100,000 ծնունդի հաշվով 25 կին մահանում է հղիության հետ կապված խնդիրների պատճառով: Երկրորդ, դեռահասների ծնելիության մակարդակը 21.5 է, հետևաբար 15-19 տարեկան յուրաքանչյուր 1000 կանանց բաժին է ընկնում 21.5 ծնունդ: Երրորդ, կանանց (կին պատգամավորների) մասնաբաժինը խորհրդարանում 18.1% է: Չորրորդ, իգական (արական) սեռի պարագայում առնվազն որոշակի միջնակարգ կրթություն ունեցող բնակչության մասնաբաժինը 96.9% (97.6%) է, ինչը նշանակում է, որ 25 և ավելի տարեկան կին (տղամարդ) բնակչության 96.9% (97.6%)-ը ունի առնվազն որոշակի (հնարավոր է՝ ոչ լրիվ) միջնակարգ կրթություն: Եվ վերջապես՝ հինգերորդ, իգական (արական) սեռի պարագայում աշխատուժի մասնակցության մակարդակը 49.6% (69.9%) է, ինչը նշանակում է, որ աշխատանքային տարիքի՝ 15 և ավելի տարեկան կին (տղամարդ)

բնակչության 49.6% (69.9%)-ը հանդիսանում է զբաղված կամ ակտիվորեն փնտրում է աշխատանք:

Ուշագրավ է, որ տարածաշրջանում ամենացածր գենդերային անհավասարությունը հենց Հայաստանում է: Պատճառն այն է, որ այստեղ բավական բարձր է կանանց ընդհանուր կրթվածության աստիճանը, ինչպես նաև նրանց ներգրավվածությունը քաղաքական գործընթացներում (որի վկայությունը խորհրդարանում կանանց շոշափելի ներկայացվածությունն է): Բացի այդ, զարգացող երկրների և աշխարհի միջինի համեմատ բարձր է նաև կանանց մասնակցությունը աշխատանքի շուկայում (չնայած, ընդհանուր առմամբ, կին աշխատուժի շրջանում գործազրկությունը էական է): Իսկ ինչ վերաբերում է մայրական մահացության գործակցին՝ ՀՀ-ում այն համեմատաբար ցածր է:

Գծապատկեր 3. Մարդկային ներուժի զարգացման ցուցանիշները ՀՀ-ում և աշխարհում 2018թ.



Այսպիսով, ինչպես ցույց է տրված գծապատկեր 3-ում, մարդկային ներուժի զարգացման բոլոր հայտանիշներով (ՄՆԶԻ, ԱՄՆԶԻ, ԳԶԻ և ԳԱԻ) Հայաստանը բարձր է աշխարհի միջինից:

6. ԱՄՓՈՓՈՒՄ

Համաձայն ՄՆԶԶ-2019-ի՝ Հայաստանում մարդկային ներուժի զարգացման մակարդակը համարվում է բարձր: Անդրադառնալով այս ցուցանիշի «անատոմիային»՝ անհրաժեշտ է առանձնացնել հետևյալ երկու հակադիր դիտարկումները. առաջին՝ ՀՀ-ն ունի համեմատական առավելություն կրթության բնագավառում, և երկրորդ՝ միջին կենսամակարդակը ՀՀ-ում բավական ցածր է ինչպես տարածաշրջանի, այնպես էլ այլ զարգացող երկրների համեմատ:

Իսկապես, ՀՀ-ում կրթական տարիների միջին քանակը զարգացող երկրների միջինին գերազանցում է 4.4 տարով, իսկ աշխարհի միջինին՝ 3.4 տարով: Այս ցուցանիշով Հայաստանը տարածաշրջանում երկրորդն է և ներառվում է աշխարհի լավագույն 40 երկրների շարքում: Միաժամանակ, թեև Հայաստանը կրթական տարիների միջին քանակով կարող է մրցակցել զարգացած երկրների հետ, այնուամենայնիվ, կրթության որակը զգալիորեն հետ է համաշխարհային մակարդակից, իսկ գիտական գործունեությունը զարգանում է միջազգային միտումներից և չափանիշներից անկախ:

Ինչ վերաբերում է կենսապայմաններին, ապա շնչային ՀԱԵ-ով Հայաստանը հետ է զարգացող երկրների միջինից շուրջ 11%-ով, իսկ աշխարհի միջինից՝ շուրջ 41%-ով: Բացի այդ, շնչային եկամուտներով Հայաստանը զիջում է իր բոլոր հարևաններին: Պատճառն այն է, որ Հայաստանում հասարակության մի ստվար զանգված հայտնվել է աղքատության ծուղակում, որը բնութագրվում է ոչ միայն ցածր կենսամակարդակով, այլև սոցիալական առաջխաղացման հեռանկարների բացակայությամբ: Միաժամանակ, մտահոգիչ է եկամուտների անհավասարությունը, որը վկայում է այն մասին, որ մարդկային ներուժի զարգացումը ներառական չէ:

Այնուամենայնիվ՝ պետական քաղաքականությունը ի զորու է հաղթահարելու այս խնդիրները, քանի որ, ինչպես հուշում է վիճակագրությունը, մարդկային ներուժի զարգացման հիմքերը ՀՀ-ում բավականաչափ ամուր են:

7. ՀԱՎԵԼՎԱԾ

ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում

ՄՆԶԻ հորիզոնական, 2018թ.	Երկիր	Կյանքի սպասվող տևողություն, տարի	Կրթության սպասվող տևողություն, տարի	Կրթության միջին տևողություն, տարի	ՀԱԵ, շնչային, ԱՄՆ դոլար	ՄՆԶԻ, 2018թ.	ՄՆԶԻ հորիզոնական, 2017թ.	ՄՆԶԻ հորիզոնականի փոփոխություն
Մարդկային ներուժի զարգացման շատ բարձր մակարդակ								
24	Սլովենիա	81.2	17.4	12.3	32143	0.9	24	0
26	Չեխիա	79.2	16.8	12.7	31597	0.9	27	1
30	Էստոնիա	78.6	16.1	13	30379	0.9	30	0
32	Լեհաստան	78.5	16.4	12.3	27626	0.9	33	1
34	Լիտվա	75.7	16.5	13	29775	0.9	34	0
36	Սլովակիա	77.4	14.5	12.6	30672	0.9	37	1
43	Հունգարիա	76.7	15.1	11.9	27144	0.8	44	1
46	Խորվաթիա	78.3	15	11.4	23061	0.8	46	0
49	Ռուսաստան	72.4	15.5	12	25036	0.8	49	0
50	Բելառուս	74.6	15.4	12.3	17039	0.8	50	0
50	Ղազախստան	73.2	15.3	11.8	22168	0.8	51	1
52	Ռումինիա	75.9	14.3	11	23906	0.8	51	-1
52	Մոնտենեգրո	76.8	15	11.4	17511	0.8	51	-1
52	Բուլղարիա	74.9	14.8	11.8	19646	0.8	51	-1
Մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակ								
63	Սերբիա	75.8	14.8	11.2	15218	0.8	65	2
69	Ալբանիա	78.5	15.2	10.1	12300	0.8	69	0
70	Վրաստան	73.6	15.4	12.8	9570	0.8	70	0
75	Բոսնիա և Հերցեգովինա	77.3	13.8	9.7	12690	0.8	75	0
81	Հայաստան	74.9	13.2	11.8	9277	0.8	81	0
87	Ադրբեջան	72.9	12.4	10.5	15240	0.8	87	0
88	Ուկրաինա	72	15.1	11.3	7994	0.8	88	0
107	Մոլդովա	71.8	11.6	11.6	6833	0.7	106	-1
108	Թուրքմենստան	68.1	10.9	9.8	16407	0.7	108	0
108	Ուզբեկստան	71.6	12	11.5	6462	0.7	109	1
Մարդկային ներուժի զարգացման միջին մակարդակ								
122	Ղրղզստան	71.3	13.4	10.9	3317	0.7	122	0
125	Տաջիկստան	70.9	11.4	10.7	3482	0.7	126	1

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*